ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆԵՐԳՈՒԹԻՒՆ

Գարսկաստանի համար տարեկան 5 ֆր. և կամ 2 րբլ. 50 կ. Թղթակ[ցութեան] Ուրիշ ամէն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, տարեկան բաժնորդագինն է 20 ֆր., վեցամսեայն 10 ֆրանք և եռամսեայն 5 ֆրանգ։

Բաժնեգիները կանխիկ կը վճարուին և Տնօրէնութիւնն ինք կ'ճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Է ՏԱՐԻ ԹԻԻ 88

1892 ՅՈՒՆԻՍ 25

ՅՈՒՆԻՍ 13 (Հ. Տ.)

ՏԱՓԱՔ

ԱրհրատարակութիՒն, Ն. Երթ. օրեր

ԳԱՅՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։

Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։

Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։

Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de Rédaction (Allées de Meilhan, 44.)

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

(Քաղուած կանոնագրէն)

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգումներ մտցունելու Թիւրքահայաստանի մէջ, հայ ժողովրդի տեղական պէտքերուն համեմատ։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւնները որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին։

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իւր նպատակ իրագործելու համար իւր կարողութեան չափով կը գործադրէ ամէն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ. կաշխատի ներքին այժ դոյացունել Ազգին մէջ իւր ազատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի ազատութեան գործին։

Միութիւնը կունենայ իրեն բերան եղող լրագիրը որ, բացի զանազան լուրեր տալէ իրրեւ լրագիր, կը հաղորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուզէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և տարբնակ Հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական եռանդը արծարծելու Հայերին մէջ։ (*)

Ծանօթ. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակցիլ կամ թղթակցիլ ուզողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian
(FRANCE) Marseille

(*) «Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպատակ Ամերիկա լրագրի հրատարակմանը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու ծայրայեղ տեսութիւնները.— Նամակ Կիլիկիայէն (Սիսկիւրքիւ).—Նամակ Պարսկաստանէն (Սովուղբլաղ). — Ֆաղուածներ անգլիական «կապոյտ տետրակ»էն.—Բաժնորդագրութիւն Արմէնիայի. — Նուիրատուութիւն. — Հայեր ի Թիւրքիա.—Հայեր ի Ռուսիա. — Վրիպակ.— Արտասահմանի լուրեր.— Յանուցումներ. — Բանասիրական (Երեսներ իմ յիշատակարանիս)։

ԵՐԿՈՒ ԾԱՑՐՍՑԵՂ ՏԵՍՈՒԹԻՒՆԵՐ Ը

Վերջին մի քանի տարիներէ ի վեր յեղափոխական միտքերը գործնականի մէջ մտնելով իրենց դառն կողմերը ալ ցոյց տալ սկսան. գոհեր տեղի ունեցան, շատ ձեռնարկներ որոնց վրայ յոյսեր դրուած էին, իրարի եռեւէն վիժեցան, մտանոթիւնը զանազան տեղերէ իր գարշելի դէմքը դուրս հանեց։

Դէպքերի այս շարք՝ անշուշտ միեւնոյն տպաւորութիւն չէ ըրած ամէն Հայի վրայ ալ. հետեւապէս ամենքն ալ միեւնոյն հետեւութիւն և միեւնոյն կարծիք չեն ընդունած։ Բայց կազմուած այդ տարբեր կարծիքներուն մէջէն երկուքը իրենց ծայրայեղութեան պատճառով աւելի աղղած կերեւին ժողովրդին։ Ես իրաւունք այժմ մեկ կողմէ ծայրայեղ յոռետեսութեան հեգնող ձայնն է որ կը լսես. իսկ մեւս կողմէ ծայրայեղ լաւատեսութեան քրքիջն և շլացումի աղմուկն է որ կը բարձրանայ։

Եթէ յոռետեսներէն կարծիքը հարցունես մեր գործերուն վիճակին մասին, անոնք ողբալի կը գտնեն գայն և դառն կերպով կը գանգատին ընդհանրապէս եղած չարժումներէն, որոնք բաղդատինդրութիւն կը համարին, և եթէ այդ յոռետեսներ տիրկոմատոր տեսակէն լինեն, հեգնական հով մ'ալ կառնեն գանգատի տոպրակը բացած ատեն։

Անոնք կը հեգնեն ու յուսահատական բացագանչութիւններ կանեն այն պատճառով որ սկիզբէն մեծ ու վայելուն յաղողութիւններ ձեռք չեն բերուած։ Յոռետեսներուն կարծիքով՝ որովհետեւ յաճախ մատնութիւններ եղան ցարդ, ուրեմն ալ անխնելքութիւն է ձեռնարկ մը չարունակել. որովհետեւ մի քանի Մամբրէներ և Թիւրթիւնճիէֆներ դաւաճանեցին, ուրեմն բոլոր երիտասարդութիւնը փըտած է. որովհետեւ դեռ մի քիւրդ ցեղ բնաջինջ չեղած, մի վրէժ չառնուած, 100աւոր կամաւորներ կը ձերբակալուին և կը դատապարտուին, ուրեմն ծիծաղելի է մեր մէջ զինուորական այժ մը կազմակերպելու միտքը և գումարի պահպանութիւն է անում։

Պետրոսը մի ակնարկ ձգեց Յովհաննէս աղայի վրայ. մի պարծենկոտ ակնարկ, որ արտայայտում էր այս միտքը. «Տեսնո՞ւմ էք, ի՛նչպէս մայր ունեմ»։

Յովհաննէս աղան ժպտելով չարժեց գլուխը։

— Օրը մինչեւ երեկոյեան, չարունակեց ես, պարտիզում քաղհանք է անում, փտած պտուղներն է հաւաքում, ջրում է՝, պատուաստում. իսկ երբ պրծնում է, ճախարակ է մանում... ի՞նչ երկարեցնեմ, միթէ՞ ձեզ պիտի նկարագրել մեր կանանց գործունէութեանը եռանդը... մեր կանայք եթէ մի րոպէ առանց գործելու մնան, հոգիները դուրս կը գայ...։

Պետրոսը գլուխը հեռացրեց և մի խոր հառաչք արձակեց. Յովհաննէս աղան գլուխը դարձրեց։ Ինչո՞ւ այդ բոլորը ես չը կարողացայ հասկանալ։

— Ա՛յ, չարունակեց ես, չը մոռանամ ասելու որ մի լաւ աղջիկ էլ գտել է քեզ համար, խօսել, վերջացրել ու քեզ է սպասում որ պսակի և յետոյ մեռնի։

Պետրոսը տխրութեամբ ժպտեց։

— Այդ ի՞նչ է, գոչեց Յովհաննէս աղան ժպտելով և նայեցաւ Պետրոսին։

— Ոչինչ, պատասխանեց Պետրոսը, ոչինչ, ես ինքս ալ չեմ գիտեր թէ ինչ է։

— Ինչպէ՞ս ոչինչ է, ինչպէ՞ս չգիտես, ասաց Յովհաննէս աղան զարմացած։

— Ոչինչ, կրկն

ՂԱՄԱՐԻ ՀԱՐՑԱԿԱՆ

Ծրագրեր, տարի 30/12 մայիս 92

Կիսվիրակ Հայոց Ժողովրդի Ներկայ Վիճակին Համար

Ս. Ա.

Ժողովրդեան տգիտութիւնը եւ անոր հետեւանքները ամենամեծ չարիքներն են, որ կրնայ պատահիլ ազգի մը։ Ասոնցմէ ազատելու համար ամէն ջանք պէտք է թափել, ամէն միջոցներ գործադրել։ Ուրեմն ի՞նչ պէտք է ընել, որ մեր ժողովուրդը լուսաւորուի։ Ասոր համար պէտք է հրատարակել օգտակար գրքեր, որոնք ժողովուրդին սորվեցնեն իր պարտքերը, ցոյց տան անոր իրաւունքները, ծանօթացնեն զայն իր հայրենեաց պատմութեան հետ, եւ մանաւանդ զարթնեցնեն անոր մէջ ազգասիրութեան զգացմունքը։ Ասոնք են ամենակարեւոր գործերը, որոնք պէտք է ընել ազգին լուսաւորութեան համար։ Ասոնցմէ զատ կան ուրիշ գործեր ալ, որոնք ազգին ոչ այնքան անհրաժեշտ են, բայց որոնք ալ կրնան մեծ օգուտ մը ընել։ Ասոնցմէ մէկն է ժողովրդական թերթերու հրատարակութիւնը։ Ասոնք ալ կրնան մեծ օգուտ մը ընել, եթէ ճշմարիտ նպատակ մը ունենան, եւ ոչ թէ միայն ուզեն ազգին մէջ անուն հանել, կամ ուրիշներուն հետ մրցիլ։ Ասոնք ալ կրնան մեծ վնաս մը ընել, եթէ ճշմարիտ նպատակ մը չունենան, եւ ոչ թէ միայն ուզեն ազգին մէջ անուն հանել, կամ ուրիշներուն հետ մրցիլ։ Ասոնք ալ կրնան մեծ վնաս մը ընել, եթէ ճշմարիտ նպատակ մը չունենան, եւ ոչ թէ միայն ուզեն ազգին մէջ անուն հանել, կամ ուրիշներուն հետ մրցիլ։

Ուրեմն ինչպէ՞ս պէտք է ըլլայ ժողովրդական թերթ մը, որ ազգին օգտակար ըլլայ։ Ասոր համար պէտք է ուշադրութիւն դարձնել հետեւեալ կէտերուն վրայ։

1. Ժողովրդական թերթը պէտք է ըլլայ ամէն մարդու հասկնալի։ Ասոր համար պէտք է գրուի ամէն մարդու հասկնալի լեզուով, այսինքն ոչ թէ գրաբարով, ոչ ալ խառն լեզուով, որ ոչ գրաբար է եւ ոչ աշխարհաբար

որոնք մեկ բառ հայերէն չգիտեն, այլ խօսում են Թիւրքի և Քիւրդի լեզուով. զբաղմունքներն է երկրագործութիւն։

Սէյտեղ կային նաեւ մի քանի Դավրիժեցի պատուաւոր ընտանիքներ. բայց անցեալ տարուայ Օր. կրէնֆիլտի կրօնափոխութեան համար այստեղ պատահած մեծ խառնակութիւնների պատճառաւ՝ բոլորն էլ Թողած են Սովուղբլաղը և Դավրէժ գնացած։ Այժմ Սովուղբլաղ առանց ընտանիքի Դավրէժէն եկած հայերէ ընացածներն են հետեւեալները. 4 վաճառական, 1 դերձակ, 1 մանրավաճառ, 1 ոսկերիչ և 1 հիւան։

Վաճառական դասը ինչպէս առաջ նոյնպէս և այժմ մեծ յարգ և մեծ պատիւ ունի այստեղ։

Դարձեալ գիւղի՝ որ Սովուղբլաղից 3 ժամուայ ճանապարհ հեռաւորութեան վերայ է գտնվում, բնակիչների մեծամասնութիւնը կազմում են հայերն, 30–35 տուն. իրենց պարագմունքն է երկրագործութիւն։ Որանք նոյնպէս չգիտեն հայերէն, այլ խօսում են Թիւրքի ու Քիւրդի լեզուով։ 4 տարի առաջ հայ բնակիչների մեծ մասը գիւղատէրերէն նեղանալով ինչ ինչ պատճառներով, զաղթեցին դէպի Սուլտուզ գաւառը և այնտեղից բոլոքեցին Ատրպատականի թեմի Ս. Առաքելոց ու Դավրէժու ընդհանուր քաղաքապետին, պահանջելով իրենց արդար իրաւունքները։ (Դարձեալ գիւղում Թողած ունէին այգիներ, պարտէզներ, տներ, հրաղայինր նայն նայն)։ Անտանելի էր զաղթեալ հայերի Թշուառ վիճակը և մինչեւ քանի ամիսներ առաջ դէպքերն օգուտ քաղելով և տեսնելով կառավարչաց փոփոխութիւնները, փութացի Հայերի կողմից մի խնդրագիր պատրաստել և ղրկել Դավրէժ ուղղակի Բարձրապատիւ Թագաժառանգ Իշխանին խնդրելով նորա ողորմածութիւնը դէպի անիրաւութեան մանրուած Թշուառ Հայերը (1)։ Բարձրապատիւ Թագաժառանգը ամենայն ողորմածութեամբ մի հրամանագրով հանդերձ մի պաշտօնեայ էլ նշանակեց, հրամայելով որ կամ զաղթեալ Հայերի իրաւացի պահանջքը ամբողջապէս իրենց վճարուի կամ գիւղատէրը պարտաւորի զաղթեալ Հայերին գոհ անելով իւր գիւղը դարձնել և յանձնելով նոցա բոլոր առաջուայ ունեցածները ապահովացնել նոցա ապագան։

Գիւղատէրը խորհելով որ այս անգամ չպիտի կարողանայ ուրիշ միջոցներ դիմել, փութաց Հայերին քաղաք կոչել և տեղւոյն կառավարչին ձեռք նորանց ապահովացրեց դրաւոր պայման Դորանց տեղերին հաստատելու և մանաւանդ մէկ ուսումնարանի հոգացողութեան մասին կը գրեմ յետոյ։

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

(1) Այս դէպքի համար կարդալ Արմենիայի 80րդ թուի «Սուլու-Պուղ» վերնագրով բանասիրականը։ ԽՄԲ.

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՆԳԼ. «ԿԱՊՈՑՏ ՏԵՏՐԱԿ»-ԷՆ

(Շար. 87րդ թուէն)

Վանի դեր-Հիւսպատոս Տըվէյ յունիս 4 Թուով կը տեղեկագրէ ռուսական Հիւսպատոսարանի Թարգմանին կողոպտուիլն Ապաղաի Քիւրդերէն. աւազակներն Հայտերանլի ցեղապետ Մերզա աղային (որին փաշայութեան տիտղոս ալ տրուած է) միջոցով փախեր և ապաստաներ են Ձէլալի Քուրդերին քով։ Նոյն տեղեկագրով, դեր-Հիւսպատոսը Մոկացի Մելիք Մելքոնի սպանուիլն ալ կը հաղորդէ. այդ անձ այնտեղի վարչական ժողովի անդամ էր. մարդասպանները գաղտնի կը մնան։ Սակայն դեր-Հիւսպատոսը այդ գաւառի եղեռնագործութիւնների մեծ մասը կը վերագրէ Հուչակաւոր Խան-Մահմուտի սերունդէն եղող չորս քիւրդ պէյերի որոնք են Ապտալ, Շէյխօ, Սիւլէյման և Շերէֆ որոնք երկրին մէջ մեծ ազդեցութիւն ունին։ Այդոնց ձեռքէն ազատուելու համար 1890ի ամառին 4–5 Մոկացի Հայերը Վան եկած և յայտարարած էին որ կա՛մ մխալիման պիտի լինին կա՛մ ալ պիտի ձգեն իրենց տուն տեղ։

Հիւսպատոս Համբսըն օգոստոս 1ին կը հաղորդէ որ Պայազիտի մօտերը Հայտերանլի Քիւրդերի մի խումբ սահմանէն անցնելով, Ռուսիա մտեր և Իկտիրի գիւղին? մէջ հայ քահանան և ուրիշներ սպաններ և ինչ որ կրցեր կողոպտեր են։ Իրազեկ աղբիւրէ կը տեղեկացուինն նաեւ թէ ռուս մի սպայ խազախ Լոկատի մը հետ այժմ Պայազիտ կը գտնուի հատուցում և յանցաւորներին յանձնուիլը պահանջելու համար։

Հիւսպատոսը օգոստոս 8ին գրելով թէ քրիստոնեայ ճամբորդները ամեն վայրկեանին, առանց մի պատճառի կը ձերբակալուին, և հարցաքննութիւնների կենթարկուին, թէեւ իրենց անցագրերը շատ օրինաւոր ալ եղած լինին, հետեւեալ դէպքն ալ կը հաղորդէ. «Անցեալ շաբթու երկու բողոքական պատանիներ Խարբերդի վարժարանէն այստեղ կը դառնային, իրենց հայրենիք երթալու համար. մին ի Ռուսիա (ռուսահպատակ էր ինքն) և միսը ի Բասէն։

«Իրենց Թուղթերը բոլորովին կանոնաւոր վիճակի մէջ էին. սակայն և այնպէս Խարբերդէն մինչեւ Էրզրում 5 տեղ բանտարկուած են և իրենց Թուղթերը կրկին և կրկին քննուելէ ետք, ազատ Թող տրուած են։ Բասէն հասնելէ ետք դարձեալ ձերբակալուելով այստեղ բերուած են առանց ոեւէ մի պատճառի։»

Հիւսպատոսների այլ և այլ Թուականներով ուրիշ տեղեկագիրներն ալ կը հաստատեն Արմենիայի մէջ հրատարակուած կարճկանի Ուրանիս գիւղի Մէլիքի սպանութիւնը, Նորաւուղի մէջ Շատախցի Մահակին սպանուիլն, Մոկի Մելիքին Ոստանի քով գաղտնի կերպով դնուահարուիլն, Նորգեղի կետուկին դէպքը (Լ. տարի Արմենիա Թիւ 3), Բալուցիների Աբգա-

նա Մատէնի մէջ գտուելն և ագարակին, Տէրսիմի Քիւրդերի և Թիւրք զօրքերի կռիւը (Արմենիա Թիւ 24 և 39)։ Այս վերջին դէպքի նկատմամբ հիւպատոսական տեղեկագիրները կը հաղորդեն Թէ Խօզաթի կառավարչի և Խարբերդի վալիին միջև անհամաձայնութիւն ծագեր է Տէրսիմցիները պատժելու մասին։ Առաջինն որ մի զինուորական է, բանակին պատիւը փրկելու համար պնդեր է որ 8–10 վաշտ զօրք բերուի, Տէրսիմցիները լարդուփշուր անելու համար. իսկ վալին կընդդիմանայ զինուորական շարժում մ'անելու և կը լանայ քաղցրութեամբ վարուիլ Տէրսիմցիների հետ. ինչպէս որ ըրաւ և Քիւրդերը լռեցնելէն վար իջնելով, ներողութիւն խնդրեցին. ասով մէկտեղ շրջակայ գաւառներէն հինգ վաշտ հաւաքուած են Խօզաթ, պատերազմական նախարարի հրամանին սպասելով։ Ինչպէս գիտեն արդէն մեր ընթերցողները, այդ խնդիրը անկէ ի վեր փակուած է և Տէրսիմցիները անպատիժ մնացած են։

(Շարունակելի)

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ "ԱՐՄԷՆԻԱ,, Ի Ը ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ ՀԱՄԱՐ

(1892 ՕԳՈՍՏՈՍ--93 ՅՈՒԼԻՍ)

Արմենիան կը հրատարակուի առաջիկայ տարեշրջանին մէջ միեւնոյն ուղղութեամբ և չաբաթն երկու անգամ, չորեքշաբթի և շաբաթ օրերն։

Տարեկան բաժնորդագինն է՝

Պարսկաստանի համար 5 ֆրանք (գրէթէ 7 ղրան կամ 2 րուբլի ռուսական թղթադրամ)։

Եւրոպայի և այլ տեղերի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, 20 ֆրանք։

«Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամներէն անոնց համար՝ որոնք տարեկան 20 ֆրանք Արմենիայի բաժնորդագինը վճարելու անկարող լինելնին կը յայտնեն խմբագրութեան ուղղուած մի նամակով, 10 ֆրանք։

Անոնք որ Պարսկաստանէն դուրս 5 բաժնորդ կը գտնեն Արմենիայի, մէկ օրինակ ալ ՁՐԻ կը ստանան, բայց պայմանով որ 6 թերթերն ալ մէկ հրաւարար նոյն անձի հասցէին ղրկուին։

Վեցամսեայ և եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին սոյն տարեշրջանի համար միեւնոյն հաշիւով առանց ոեւէ յաւելման։

Արմենիայի անօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԵՐՆ ԿԱՆԽԻԿ ՊԼՏՔ Է ՂՐԿՈՒԻՆ։

Հարկ կը համարինք յիշեցունել Արմենիայի բաժնորդներին որ եթէ ՁՐ ՓՈԽԹԱՆ վերանորոգել իրենց բաժնորդագրութիւնն Ը տարեշրջանին համար՝ բաժնորդագինն կանխիկ ղրկելով, իրաւունք չեն ունենար յետոյ գանգատելու երբ նոր տարեշրջանի սկիզբն չյարմանակենք իրենց թերթ ղրկել. և երբ ժամանակ անցնելէ յետոյ ստանանք իրենց պատուէրը, գուցէ չկարենանք նոր տարեշրջանի ընդհանական թիւերը ղրկել իրենց, ինչպէս այդ պատահած է ուրիշ անգամներ, որովհետեւ մենք որչափ բաժնորդ ունենանք տարեշրջանի սկիզբն նոյնչափով թերթ կը տպագրենք։

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Վսեմ. Ջունդ Ապպետ նուիրեց 1 օրինակ Արմենիա Ռումանիայի Թըրկօգնա քաղաքի Հայերի եկեղեցուն։

ՀԱՑԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Ռոտոսթոյի (Թէքիրտաղ) մէջ մարախը շատ աւերումներ սկսած է անել։ Ռոտոսթոյի Հայերի մեծագոյն մասը հողագործ լինելով, մեծ վնասներ ենթակայ եղած են։ Այդ վիճակի Հոգեւոր Հովիւ Գեր. Հմայեակ Եպիսկոպոս Դիմաքսեան որ Էջմիածնէն վերադարձած է Կ. Պոլիս, Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովին ներկայանալով մի մանրամասն տեղեկագիր տուած է մարախներուն պատճառով իր Ժողովրդի կրած վնասներուն վրայ և մարախները չուտով և դիւրով ջնջելու համար մասնագէտ անձերի Ռոտոսթօ ղրկուիլը խնդրած է։ Նորին Գերապատուութիւնը՝ Քաղաքական Ժողովի հաւանութեամբը և Բ. Դրան մօտ Պատրիարքարանի գործակատար Աբրահամ Էֆէնտիի ընկերակցութեամբ, Ամիլէի պաշտօնատունը երթալով, Դատական նախարար Րիզա փաշային ներկայացած և իր վերոյիշեալ տեղեկագիր մատուցած է։ Հմայեակ Սրբազան նոյն առթով խնդրած է նաեւ որ Ռոտոսթոյի Սուրբ Թաղի այրուած վարժարանի վերաշինութեան արտօնագիրը չուտով տրուի կառավարութենէն։ Այդ կարգադրութիւններէ յետոյ, յունիս 1/13ին, Գեր. Հմայեակ Եպիսկոպոս փութացած է մեկնիլ Կ. Պոլսէն Ռոտոսթօ։

ՀԱՑԵՐ Ի ՌՈՒՍԻԱ

Մայիս 24/5 յունիսի կիրակի օր, Թիֆլիսի Հայերի Մայր-եկեղեցուբակին մէջ կատարուած է հանդուցեալ Պետրոս Շանշեանի մահարձանի բացումը հանդիսաւոր կերպով։ Հանդիսին նախագահած է Գեր. Սահակ եպիսկոպոս Թոպալեան, Երուսաղէմի պատուիրակը կաթողիկոսական ընտրութեան համար, որ նոյն օր պատարագած է յիշեալ եկեղեցւոյն մէջ և յիշատակ Շանշեանի և քարոզ խօսած։ Պետրոս Շանշեանը Ռուսիոյ Հայերի կրթական գործին հին աշխատաւորներէ մին է որ թէեւ իր ժամանակին թշնամութիւնների և հալածանքներու ենթարկուած, բայց աշակերտներ կրցած է հասցունել։ Մի քանի պերքեր ալ հրատարակած է բարոյախօսական և կրօնական բովանդակութեամբ։ Բայց ժամանակներէ ի վեր հանրային կեանքէն

քաշուած կապրէր իւր գիւղական մի կալուածի մէջ ուր աւանդած է իւր վերջին շունչ։ Իւր աշակերտները իրենց մէջ հանդանակութիւն բանալով կանգնած են այդ մահարձան որ, Թիֆլիսի լրագիրներուն գրածին նայելով, գեղարուեստական ճաշակով մի գեղեցիկ աշխատութիւն է։

— Բագուի մէջ նաւթային գործը որ այնտեղի Հայերուն հարստութեան աղբիւրն է եղած, վերջին ժամանակները չատ ինկած լինելով, անձնական թիւններուն և մինչև իսկ անձնասպանութեան պատճառ դարձած է։ Գերապատիւ Յովհաննէս Ժամհարեանց անուն 38 տարեկան մի վաճառական որ նաև նաւթագործարանատէր էր (Մոսկուայեան եղբ. Ժամհարեաններուն հետ կապ չունի), բէվոլվէրով սպանած է ինքզինք որովհետեւ անկարող գըտնուած է այս միջոցին պայմանաժամը լրացած 8 հազար րուբլու մօտ պարտամուրհակները պատրաստ դրամով ապահով որոց տէրերը սպառնացեր էին բողոքել իր դէմ։ Իր նկատմամբ կարողութիւն 200,000 րուբլու կը հանէր իր կալուածներով, գործարաններն և խանութին մէջ ունեցած ապրանքներով. իսկ ունեցած պարտքն է 60,000 րուբլի զանազան պայմանաժամներու մէջ վճարելի։ Անձնասպանը 2 նամակ թողած է. մէկը ոստիկանութեան ուղղուած որուն կը յայտնէ իր անձնասպանութիւն որպէս դի ուրիշի նեղութիւն չպատճառուին իր մահուան համար և միւսը իր կնոջ ուղղուած որմէ ներողութիւն կը խնդրէ արտաշարժ խօսքերով, իր պատիւ պաշտպանելու նպատակով անձնասպանութիւն արած և վինք մինակ թողած լինելուն համար։

ՎՐԻՊԱԿ

Նախորդ թուով հրատարակուած Եգիպտոսի նաւակի սկիզբը պակսած է հետեւեալ տողը. «Գահիրէ, 17/29 մայիս 1892»։ «Բանասիրական» բաժնի Բ երեսի Բ էջի 21րդ տողին մէջ գտնուող բառը պիտի լինի գտնաքին։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Պուլկարիայի Ֆերտինանտ իշխանը այժմ փարիզ կը գտնուի, Անգլիայի մէջ իր ըրած պտոյտէն վերադառնալով։ Փարիզէն կը գրեն թէ իշխանը յաջողած է Լոնտոնի մէջ պուլկարական յատուկ դիւանագիտական մի դործակալութիւն հաստատել։ Լորտ Սալզպըրիի Արտաքին գործերի դիւանատունը այդ գործակալութեան հետ ուղղակի յարաբերութեան մէջ մըտնելը ընդունելով, կը հաստատէ թէ ինք Պուլկարիայի մէջ գործերն ներկայ վիճակը որով և իշխան Ֆերտինանտի կառավարութիւնը օրինաւոր կը ճանչէ։

— Սպանիայի մէջ հեռագրական բոլոր պաշտօնեաները գործադուլ արած լինելով, արտաքին երկիրներուն հետ հաղորդակցութիւնը փոստով ակսած է կատարուիլ։ Եթէ գործադուլը չադրունակուի, կառավարութիւնը բոլորովին ուրիշ նոր ձեւի վրայ պիտի կազմակերպէ հեռագրութեան վարչութիւնը։

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գր. Ա. Մ. Բէյիշկեանց կը ծանուցանէ որ ամսոյս 14ին Մարսէյլ հասած լինելով, վերսկսած է իր գործառնութիւններ։

Հասցէ՝

Mr. A. M. Pejischkiantz Marseille

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Արմենիայի խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն հաւաքուելով։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք չղրկուիր։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (*Սպառած*)։

Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ »

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՑԵՑԱՑ (*Պուլղար ազգին իր ազատութիւն ձեռք բերելու համար մէկ դարէ ի վեր արած չանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է։*) (1 *ֆր.* 10 *սնթմ.*) 1 ֆր. 50 *սթմ.*

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(*Հայաստանցիներուն պանդխտութեան տխուր հետեւանքներուն մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացնէ վիպական կերպով։*) Գին (90 *սնթմ.*) 1 ֆրանգ 20 *սնթմ.*

Զ. ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենից առարտեղութեան (*Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են*)։ 50 *հատը* 2 ֆր. և 50 *սանթիմ*, *հատը* (5 *սնթմ.*) 10 *սանթիմ*։

Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆՔԸ ՏԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (*Սպառած*)

Ը. ԹԻՒՐՔԻԱՅ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (*Թիւրքիայի Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։*) Գին 50 *սանթիմ* (35 *սանթիմ*)։

ԺԲ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՅՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ԴՐԱՄ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԻՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իրենց նմոյշները զանազան քաղաքներուն մէջ և զանազան տպաւորութիւնների տակ իւրաքանչիւր գրած ոտանաւորներին որոնք ժամանակին հրատարակուած չըլլալով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորներ որոնք իրրև նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս տպագրուած աղգային երգարաններին մէջ՝ որոց վերատին տպագրութիւնն վաղուց արդէն արգիլուած է, և Ասիա և Արմենիա լրագիրներին մէջ։ Նմոյշներուն մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորներ ի՛նչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են։ Գին (10 *սանթիմ*) 15 *սանթիմ*։

ՀԱՑՈՑ ՀԱՑՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՏՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ հաստատ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր Հայրենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու։

Կը խնդրուի ամեն Հայրենասէր Հայերէ իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ։ Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը ղրկուի 5 ֆրանքով։ Հատին գինն է 15 *սանթիմ* (Պարսկաստանի Հայերին հաժար 10 *սանթիմ*)։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՌՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԼՂԱՔԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացնէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքներ պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ։ Գին 1 ֆրանգ, (75 *սանթիմ*)։

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերէն վրայ ժամանաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներով։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Արմենիայի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին, ի միջի այլոց, և հետեւեալ գիրքերն որոց գիներն նշանակուած են, ղրկելու փոստի ծախքն ալ միասին սաչուելով։

Վ. Փափազեանց—Խաթ-Սաբա Հայրոշաների կեանքից) ,35 *սանթիմ*։

Վ. Փափազեանց — Ձգնաւոր եղօ (Թիւրքահայերի կեանքից) ,35 *սնթմ.*։

Շիրվանզատե — Դործակատարի յիշատակարանից (մի պատկեր վաճառականական կեանքից) և Հրդեհ Նաւթագործարանում (Բագուի մշակների կեանքից) 1 ֆրանք 75 *սնթմ.*։

Գաբրիել Եպ. Այվազեան—Աբեղն ու մոլորակները (Լաւագոյն կենցաղագիտական գիտելեաց) ,35 *սանթիմ*։

Նոյնն—Եգիպտոսի հնութիւնները ,35 *սանթիմ*։

Նոյնն—Մեծն Ներսէս Հայրապետ 35 *սանթիմ*։

Մանկունի—Այրի վանք կամ Դեղարդայ վանք ,35 *սանթիմ*։

Վարդուկեան— Դայլայլիկ (Գրաբար ոտանաւորներ՝ արարչագործութեան հրաշալիքներին վրայ) ,75 *սնթմ.*

Զմիւռնիոյ եղբայրութիւնք Ս. Պատարագի—Բ *տրպ. էջմիածին* 10 ֆր.։

Վ. Փափազեանց—Պատկերներ թիւրքահայերի կեանքից (Հեղինակին 11 հատ ամենաընտիր վէպիկները). 4 ֆրանք։

Ասոնցմէ զատ, Արմենիայի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին նաեւ Հ. Ալիշանի, Հ. Ինճիճեանի, Հ. Դարեգին Զարբհանէլեանի, Րաֆֆիի, Ծերենցի հրատարակուած բոլոր գիրքերն, ինչպէս և ուրիշ օգտակար գիրքեր և քարտէզներ Հայաստանի՝ Հայերէն կամ լատինական տառերով և զանազան գիներով և.ն. և.ն.։

Գրավաճառանոցի ժամադաս ցուցակը որ 90 երեսներէ կը բաղկանայ, ցանկացողներին կը ղրկուի ձրիապես։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔ ԵՒ ՊԱՏԿԵՐ

Հ. Ց. Վ. Իսաւհէրտեանց. Կրթասէր անգլիական լեզուի (Անգլիերէն լեզուն դիւրին և գործնական ոճով սովրեցնող քերականութիւն մ'է հրահանգներով մէկտեղ)։ Ա. հատորը կը բաղկանայ 256 երեսէ և Բ. հատորը 216 երեսէ. վերջն ալ յաւելուած մը կայ 50 երեսէ բաղկացած որ հայերէն հրահանգներուն անգլիերէն թարգմանութիւնն է։ Երկու հատորը միասին 5 ֆր.։ (1 տոլար ամերիկեան)։

Նշանակէք Հայաստանեայց. Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թագաւորութիւնների նշանակներովը մէկտեղ փայլուն թղթի վրայ և կանաչ կապոյտ և դեղին գոյներով ներկուած, 1 ֆրանգ։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՑԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի

Marseille. — Imprimerie du Midi, et Papeterie Allées de Meilhan, 44.